ԿԱՐԾԻՔ

Նելլի Գևորգի Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թվականներին», Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նելլի Ժամկոչյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսությունը վերաբերում է հայոց պատմության համար առանցքային և արդիական մի ժամանակահատվածի՝ Կիլիկյան Հայաստանի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությանը: Խնդրո առարկա ժամանակահատվածը մեր պատմության տեսանկյունից առանցքային կարևորություն ներկայացնող ժամանակաշրջաններից է հատկապես պետություն-եկեղեցի հարաբերությունների համատեքստում:

Պետք է նշել, որ թեմային առանձին անդրադարձներ եղել են, բայց ատենախոսին հաջողվել է սկզբնաղբյուրային հենքի հիման վրա կատարել հսկայական ինքնուրույն աշխատանք և լուծել իր առջև դրված խնդիրը:

Առաջին գլուխը վերաբերում է Հռոմկլայի կաթողիկոսության և Կիլիկիայի հայոց պետության 1166-1187 թթ. հարաբերություններին:

Երկրորդ գլխում հեղինակն անդրադարձել է Լևոն Մեծագործի իշխանության ժամանակաշրջանի պետություն-եկեղեցի հարաբերություններին:

Երրորդ գլխում քննության են առնված 1198-1219 թվականների պետության և եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունը:

Չորրորդ գլուխը վերաբերում է Կիլիկիայի հայկական պետության և Հայ Առաքելական եկեղեցու՝ 1219-1226 թվականների փոխհարաբերությունների պատմությանը:

Կարևորելով ատենախոսության դրական տարբեր կողմերը, հարկ ենք համարել առանձնացնել հետևյալ կետերը, որոնք ատենախոսին առաջարկում ենք նկատի առնել.

1. Աշխատանքը ավելի կշահեր, եթե հեղինակը օգտագործեր առավել շատ օտարալեզու գրականություն,

2.Ատենախոսության համար առանցքային նշանակություն կարող էին ունենալ ֆրանսահայ անվանի պատմաբան Ժերար Դեդեյանի մի շարք հոդվածները և հատկապես 2003 թվականին լույս տեսած ծավալուն «Հայերը հույների, մահմեդականների և խաչակիրների միջև» հետազոտությունը:

3. Ատենախոսությունում կան հատվածներ, երբ հեղինակն անդրադառնում է պատմական դեպքերի և իրադարձությունների, սակայն չի նշում աղբյուրները, օրինակ՝ էջ 34, 53, 76, 97 և այլն:

4. Կարծում ենք էջ 30-ի ենթագլուխը՝ <<Ռուբեն Բ-ի սպանության առեղծվածը>>, անհրաժեշտություն չկար առանձին ենթագլխով ներկայացնել:

5. էջ 71-ում հեղինակը նշում է, որ Լևոնը հաշվի առնելով Կիլիկիայի պետական համակարգի մի շարք շարք ղեկավարների, ինչպես նաև բարձրագույն հոգևորականության դժգոհությունը՝ որոշեց ազատվել երիտասարդ կաթողիկոսից և հանձնարարեց իր մտերիմ հոգևորականներից Հովհաննես Սսեցու միջոցով կարգալույծ անել կաթողիկոսին, որից հետո ժողով անեն և որոշում կայացնեն: Ցավոք վերը նշված հատվածում հեղինակը չի հստակեցնում, թե կոնկրետ որ պաշտոնյաները և իշխաններն էին դժգոհ երիտասարդ կաթողիկոսի դժգոհությունից:

Ի մի բերելով ատենախոսության՝ մեր իրականացրած ուսումնասիրությունը, գտնում ենք, որ վերը շարադրյալ դիտարկումները չեն կարող էական ազդեցություն ունենալ այն հսկայական և մեծածավալ աշխատանքի վրա, որ կատարել է ատենախոսը՝ մասնագիտական խորհրդին ներկայացնելով բավականին ամբողջական ատենախոսություն: Հետևաբար, Նելլի Գևորգի Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թվականներին» ատենախոսությունը բավարարում է Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ներկայացրած պահանջներին, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին նրան շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս

Արարատ Վարդանի Ստեփանյան, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դասախոս

Պատմական գիտությունների թեկնածու

Պ.գ.թ. Ա. Վ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան

05.06.2025